

Վիճակագրական տեղեկատվություն  
սպառողներին (օգտագործողներին)

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով, կարծիքի է ներկայացվում «[2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի](#)» (այսուհետ՝ Ծրագիր) նախագիծը՝ խնդրանքով նշված փաստաթղթի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների պարագայում, դրանք մինչև սույն թվականի հուլիսի 30-ը ներկայացնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը, հետևյալ հասցեներով՝

**փոստային հասցեն՝** ք. Երևան, 0010, Հանրապետության պողոտա,  
Կառավարության տուն թիվ 3 **կամ**

**էլեկտրոնային հասցեն՝** [svod@armstat.am](mailto:svod@armstat.am)

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված դրույթների, Ծրագիրը մշակվում է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: Ծրագրում նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և ապահովեն տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը: